Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՆԱԶԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(24 հունվարի 1999 թ.)

«Ես եմ, մի երկնչիք»:
(Հովհ. Զ 20)

Հիսուս ստիպված էր մարդկային զանազան օրինակներ ցույց տալ ժողովրդին՝ բացահայտելու համար Իր աստվածային էությունն ու ճշմարտությունը: Այսօր ընթերցվեց Հովհաննեսի Զ գլխի այն հատվածը, որտեղ ավետարանիչը գեղեցկորեն նկարագրում է առաքյալներին, երբ Գալիլիայում լճի վրա հանկարծ փոթորիկ է բարձրանում: Հիսուս նրանց հետ չէր: Եվ փոթորկի մեջ առաքյալները հանկարծ սարսափահար նկատում են Հիսուսին՝ ջրերի վրայով իրենց մոտենալիս: Հիսուս հանգստացնում է՝ ասելով. «*Ես եմ, մի՛ երկնչիք» (Հովհ. Զ 20)*: Այնուհետև ավետարանիչը հետաքրքիր կերպով մեզ է ներկայացնում Հիսուսի այս խոսքերի արդյունքը՝ թե փոթորիկը դադարեց, և աշակերտները հանդարտորեն հասան այն տեղը, ուր գնում էին: Հարց է ծագում, թե աշակերտները փոթորկի՞ց էին վախեցել, ինչը որ բնական, մարդկային մի երևույթ է: Սակայն, այս ամենին հակառակ, Աստծո գերագույն ներկայությունն է, որ մարդկանց հոգիներում խաղաղություն ու հանգստություն կարող է հաստատել: Աստծուն, սակայն, ենթարկվում են ոչ միայն մարդկային հոգեկան ապրումներն ու հուզումները, այլև բնության տարերքները:

Առաջին հայացքից ոչ այնքան գիտակ մեկին Հիսուսի խոսքը՝ «*Ես եմ*», կարող է սովորական պարզ մի նախադասություն թվալ: Սակայն եթե բացենք Ելից գիրքը, կտեսնենք, թե ինչպես Մովսես մարգարեն Սինա լեռան վրա տեսավ վառվող, բայց չմոխրացող մորենին: Տերը երբ առաքեց Մովսեսին Եգիպտոս՝ իսրայելացիների մոտ, Մովսես հարցրեց, թե ինչպե՞ս ծանուցեմ Քեզ նրանց, և Աստված ասաց. *«Ես եմ, որ է-ն»* (Ելք Գ 14), *«Ես եմ քո Տեր Աստվածը, Ես եմ, որ կամ հավիտենապես և գոյություն ունեմ»* (Օնոդոց ԺԵ 7): Այդ «է-ն» մեր Ա. Էջմիածնի առաջին է-ն է, Նա, որ Աստված է, Նա, որ գոյություն ունի հավիտենապես: Հիսուս թե՛ Իր աշակերտներին, թե՛ ժողովրդին փորձում էր տարբեր ձևերով բացատրել այս՝ ասելով. *«Ես եմ Հացն Կենաց»* (Հովհ. Զ 35), *«Ես եմ Ճշմարիտ Որթատունկը»* (Հովհ. ԺԵ 1), *«Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը ու Կեանքը»* (Հովհ. ԺԴ 6), *«Ես եմ Կեանքը»* (Հայտ. Ա 18), *«Ես եմ Լույսն աշխարհի»* (Հովհ. Ը 12):

Այս բոլորն իր մեջ ամփոփում է, թե «*Ես եմ ձեր Աստվածը, ձեր հայրերի Աստվածը*»: Հետևաբար, երբ մեկը ցանկանում է խոսել ձեզ հետ քրիստոնեական հավատքի մասին, ցանկանում է կրոնական արքության հրավիրել, հարցրեք, թե արդյոք այդ անձը հավատո՞ւմ է, որ Հիսուս Ինքը մեր Տեր Աստվածն է: Այս է մեր հավատքի անկյունաքարը: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, երեկ և այսօր, նույնպես և հավիտենապես Աստված է: Նրանք, ովքեր չեն ընդունում այս ճշմարտությունը, ճշմարիտ քրիստոնյաներ լինել չեն կարող:

Մեր Հայ Առաքելական Եկեղեցին ընդունեց այս ճշմարտությունը, և Աստված օրհնեց մեզ: Ջրհեղեղից հետո առաջինը, որ ազատվեց կործանարար ջրերից, դա Արարատն էր: Աստված բնականաբար չէր թողնի, որ այս շրջանի ժողովուրդը հեթանոսության մեջ խարխափեր: Աստված որդեգրեց մեզ, Իր առաքյալների, Գրիգոր Լուսավորչի միջոցով, ում տեսիլքի մեջ Աստված իջավ և Իր Արքայության ճշմարիտ ժառանգորդները դարձրեց մեզ:

Հայ Եկեղեցու զավակները մեր ժողովրդի պատմության ճանապարհին կրկին ու կրկին Աստծուն այցելության իջեցրին Իր որդիներին այս հողի վրա՝ Նարեկացու տեսիլքով, Շնորհալու և Կոմիտասի շարականներով: Երբ Մովսես մոտենում էր անկեզ մորենուն, Աստված ասաց նրան. *«Կոշիկներդ հանի՛ր քո ոտքերից, որովհետև այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է»* (Ելք Գ 5): Այսօր մենք այստեղ սրբություն սրբոց էջմիածնում ենք գտնվում, այնտեղ, որտեղ իջավ Ինքն Աստված: Հետևաբար, սիրելի հավատացյալներ, երբ եկեղեցի ենք մտնում, հատկապես Ս. Էջմիածին, եկեք գիտակցենք, թե որտեղ ենք, թող մեր հոգիների մեջ Քրիստոսի լույսից մի կաթիլ կաթի: Խավարը և լույսը միմյանց հակառակ են, սևն ու սպիտակը չեն կարող իրար միանալ, մեկը մյուսին պիտի կլանի: Պետք է ջանանք մեր հոգիները նախ մաքրել, խաղաղեցնել: Եվ երբ լսեք Տիրոջ ձայնը, թե «Ես եմ, մի՛ վախեցեք», չվախենաք, քանզի Տերը չեկավ մեզ վախեցնելու. Հիսուս իբրև Հովիվ, իբրև ճշմարիտ Առաջնորդ եկավ՝ տեր կանգնելու նրանց, ովքեր հավատացին Քրիստոսի անվանը:

Թող մեր աղոթքները բարձրանան առ Աստված, որպեսզի Նա էլ իր հերթին իջնի և բնակվի մեր հոգիներում: Մեզանից յուրաքանչյուրը Քրիստոսի կարիքն ունի, ունի կարիքը Նրա կանչի՝ «Ես եմ, մի՛ երկնչիր»: Ճանաչենք Տիրոջ ձայնը, փարվենք Նրան, լինենք Նրա հետ, որպեսզի չարը չկործանի մեզ, չզրկի հավիտենական կյանքից: Այսօր, սիրելի ժողովուրդ, թե՛ իբրև անհատներ և թե՛ իբրև հավաքականություն, իբրև ժողովուրդ, իրավունք չունենք ընկրկելու և տեղի տալու: Այն ոսկե շղթան, որ հյուսվել է հազարամյակների ընթացքում մեր ժողովրդի չարչարանքով ու պայքարով, այսօր իրավունք չունենք զոհելու և խզելու: Եթե ցանկանում ենք ապրել իբրև քրիստոնյա հավատացյալներ, իբրև Հայ Եկեղեցու ճշմարիտ զավակներ, պետք է պահպանենք մեր անցյալը, մեր հայրերի հավատքը՝ կերտելու համար մեր ապագան իբրև ժառանգություն մեր սերունդներին: Հայ Առաքելական Եկեղեցին այս շենքը չէ, մեզանից յուրաքանչյուրն է կազմում Հայ Եկեղեցին, և, այդ իսկ պատճառով, յուրաքանչյուրս էլ պարտավոր ենք տեր կանգնել այս հարստությանը:

Սիրելի՛ հավատացյալներ, աղոթենք առ Աստված, աղոթենք հոգով, որպեսզի Տիրոջ ձայնը ճանաչենք, որպեսզի երբ լսենք՝ *«Ես եմ, մի՛ երկնչիր»*, չվախենանք, այլ երկարենք մեր ձեռքերը առ Աստված՝ ազատվելու համար մեր տկարություններից, և Տիրոջ հետ ապրենք այսօր այս աշխարհում և վաղը՝ հավիտենականության մեջ, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն: